

**««Պաշտոնատար անձանց գործունեության
ապահովման, սպասարկման և սոցիալական
երաշխիքների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության
ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին»
Հայաստանի Հանրապետության 2014 թվականի փետրվարի 4-ի թիվ ՀՕ-1-Ն
օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ
5-րդ մասով.

«5. Սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի
կարող ավել լինել Կառավարության սահմանած առավելագույն կենսաթոշակի
չափից:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ
մասով.

«11. Սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը
չի կարող ավել լինել Կառավարության սահմանած առավելագույն
կենսաթոշակի չափից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: